Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՄԱՀՄՈՒԴ ՍՏԵՓԱՆՈՍԻՆ «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ԲԱՐԵԿԱՄՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՅՍ ԵՒ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԵԱՆՍ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ՄԱՀՄՈՒԴ ՍՏԵՓԱՆՈՍ, ՈՐ Ի ՄՈՆՐԷԱԼ, ԿԱՆԱԴԱ

Յարգարժան պրն Ստեփանոս,

Մեծապէս ուրախ ենք համայն հայութեան հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ողջունելու Ձեզ՝ հայ ժողովրդի եւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու սիրելի բարեկամիդ, եւ բերելու Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքները:

Կանադայի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Բագրատ եպիսկոպոս Գալստանեանից գոհունակութեամբ տեղեկացանք Ձեր աստուածահաճոյ գործերի եւ ազնիւ ու ծառայասէր ոգու մասին: Ուրախ ենք, որ մեծ հաւատքով եւ գովարժան աջակցութեամբ մշտապէս սատար էք լինում Քրիստոսի Սուրբ Եկեղեցու աստուածադիր առաքելութեանը՝ նպաստելով քրիստոնէական հոգեւոր արժէքների պահպանութեան ու հաւատքի տարածման նուիրական գործին:

Ձեր սէրն ու խորին յարգանքը հանդէպ Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցին Դուք արտայայտեցիք Կանադայի հայոց Տիրախնամ թեմի առաքելութեանը զօրակցելու ազնիւ յանձնառութեամբ: Մեր Եկեղեցու եւ ժողովրդի հանդէպ Ձեր բարի վերաբերմունքով Դուք ընդգծում էք դարաւոր բարեկամութիւնը հայ եւ ղպտի հաւատակից ժողովուրդների միջեւ՝ յաւելելով Ձեր վարձքը Երկնքում:

Մեծարգոյ տիար Ստեփանոս, Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն մատուցած Ձեր ծառայութեանց ու վաստակի բարձր գնահատանքով, ընդառաջ Կանադայի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Բագրատ եպիսկոպոս Գալստանեանի խնդրանքին, Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ մեր Սուրբ Եկեղեցու

Ս Ո Ւ Ր Բ Գ Ր Ի Գ Ո Ր Լ Ո Ւ Ս Ա Ւ Ո Ր Ի Չ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Ի խորոց սրտի աղօթքով Բարձրեալն Աստուծոյ օրհնութիւնն ու օգնականութիւնն ենք հայցում Ձեզ եւ մաղթում, որ Տէրը Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Հայրապետի բարեխօսութեամբ պարգեւի Ձեզ քաջառողջ արեւշատութիւն եւ առաքինի գործոց յաջողութիւններ։

Թող ընտանեկան Ձեր յարկը շնորհընկալը լինի երկնապարգեւ շնորհների եւ Բարձրեալի առատ ողորմութեան։

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն։

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 13-ն Նոյեմբերի
յամի Տեառն 2006 եւ ի թուին հայոց ՌՆԾԵ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 388